№ 100 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5 1889 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5 № 100

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայեր և քիւրդեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիսի ներկայ թեականի ձիարշաւը. Նամակ Ալէքսանդրապօլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երեքպետեան դաշնակցութիւնը և Անգլիան. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նկարչի կեանքից.

ՀԱՑԵՐ ԵՒ ՔԻՒՐԴԵՐ

—

Շատ է խօսվում այժմ թէ արևմտեան եւրոպական և թէ ռուսաց մամուլի մէջ Թիւրքաց Հայաստանի մասին և այդ երկրի մէջ քիւրդերի գործած հարստահարութիւնների մասին։ Գրվում են բաղաքական բազմաթիւ յօդուածներ. բայց, մեր կարծիքով, մի որ և է երկրի քաղաքական վիճակը լաւ ըմբռնելու համար, նախ պէտք է դիտել և ուսումնասիրել նոյն երկրի տնտեսական վիճակը, այն ինչ թէ եւրոպական և թէ ռուսաց հասարակաց կարծիքն ու մամուլը շատ անկատար հասկացողութիւն ունեն հայերի և քիւրդերի փոխադարձ յարաբերութիւնների մասին Թիւրքաց Հայաստանում։

Քիւրդերը չեն կազմում, ինչպէս շատերը այդ կարծում են, աւազակային պատահական և բաժան բաժան հրոսակներ Թիւրքաց Հայաստանում, այլ քիւրդ բեգերը ուրիշ բան չեն, եթէ ոչ ուզուրպատորներ, յափշտակիչներ գիւղացիական հողերի, այդպէս ասած՝ նոր ժամանակների աւազակ-աւատականներ, ինքնակոչ ֆէօդալներ։ Նրանք աւազակներ են, որոնք Թիւրքաց տեղական իշխանութեան անհոգութեան, իսկ դուցէ և քաջալերութեան պատճառով, դարձան տիրապետող իշխաններ, մի տեսակ աւատական տէրեր գիւղացիների հողերի, ինչպէս հայ, այնպէս էլ Թիւրք գիւղացիների։ Եւ ոչ թէ միայն հայ հողագործները, որոնք Թիւրքաց Հայաստանում երկրագործ ազգաբնակութեան մեծամասնութիւն են կազմում, բայց նրանց հետ միասին և Թիւրք գիւղացիք հաւասարապէս տանջվում են քիւրդերի ձեռքում։

Եւ ահա ինչպէս կազմակերպվեց քիւրդ պետերի, այդ նոր ժամանակների աւատական, ֆէօդալական իշխանութիւնը։ Քիւրդ Թափառականները ի բնէ սովոր չը լինելով որ և է աշխատանքին, ապրում էին միշտ աւազակութեամբ միայն։ Բայց մի անգամ հաստատվելով Հայաստանի մի յայտնի գաւառում, քիւրդ բեգը իր աւազակային հրոսակով՝ սկսում է մշտական հարկ պահանջել շրջապատող գիւղացիներից։ Այդպիսով երկրագործը հեռվհետէ դառնում է քիւրդ բեգի հարկատուն և եթէ ճիշդ կերպով չէ կարողանում վճարել իր այդ տուրքը, այն ժամանակ ենթարկվում է բեգի աւազակային հրոսակների զինաւորված ծառաների ասպատակութիւններին։ Վերջ ի վերջոյ ողորմելի հարկատու երկրագործի անճիշդ վճարումների պատճառով գիւղացիական հողերը հեռվհետէ անցնում էին քիւրդ բեգի իշխանութեան տակ։ Այդ տեսակ կամայական և ինքնակոչ հոգատարութիւնը, այդ տեսակ անբնական և հրէշաւոր երևոյթ՝ որ աւազակային խմբի պետը միջոց ունէր անպատիժ դառնալ գիւղացիական հողերի վրա իշխող, միջոց ունէր իրապէս հանդիսանալ որպէս ամբողջ գաւառների աւատական իշխան,—կարող էր տեղի ունենալ միմիայն Թիւրքիայում։

Այդպիսով հայերը, որոնք իրանց պատմութեան ամբողջ ընթացքում երբէք չեն ունեցել ոչ սարկութիւն, ոչ էլ ճորտութիւն, վերջին ժամանակները իրապէս դարձան իրանց երկրի քիւրդ բեգերի սարուկներ, ճորտեր, նրանց պարտաւորված հարկատուներ և բացի սրանից այնպիսի հարկատուներ, որոնք երբ որ անճիշդ են լինում իրանց վճարումներում,—փողի կամ բնական արդիւնքների վճարման տեղ՝ վըճարում են բեգին իրանց տան ունեցածով, նոյն իսկ իրանց արիւնով և իրանց կանանց ու աղջիկների պատուով։ Ուրեմն հայերի հարստահարութիւնը քիւրդերի ձեռքով սովորական աւազակութիւնների և յափշտակութիւնների հարցը չէ, ինչպէս այդ կարծում են եւրոպայում, այլ դա տնտեսական ապօրինի յարաբերութիւնների այնպիսի մի վիճակ է, որը խոր արմատներ է դցել երկրի ներքին կազմակերպութեան մէջ, դա հողատէր գիւղացու և ապօրինի հողատէր բեգի մէջ սարսափելի, խուլ, տեւողական տնտեսական մաքառման, հողային (аграр) կռիւ հարց է, որը չէ կարող լուծվել հարստահարված գիւղացիների միմիայն հասարակ պաշտպանութեամբ՝ բարձրված պօլիցիայի կամ ժանդարմերիայի հաստատման միջնորդութեամբ, այլ պէտք է լուծվի արմատական ներքին վերանորոգութիւններով։

Ուրեմն քիւրդերի ասպատակութիւնները Թիւրքաց Հայաստանի երկրագործների վրա, լինեն այդ երկրագործները քրիստոնեայ թէ մահմէտական, չեն կարող համարվել սովորական և պատահական աւազակութիւններ, այլ իրերի այդ դրութիւնը մի կազմակերպված, նախամտածված և Թիւրք տեղական վարչութիւնից օրինական համարվող մի ամբողջ սիստեմ է։ Դրա մէջն է բովանդակվում, ուրեմն, Հայաստանի գիւղացու աղէտալի վիճակի, նրա մշտական տանջանքների հանելուկի լուծումը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՆԵՐԿԱՅ ԹԻԱԿԱՆԻ ՁԻԱՐՇԱՒԸ

—

Որպէս զի Անդրկովկասի զանազան կողմերից ցանկացողները միջոց ունենան ծանօթանալու Թիֆլիսում 1889 թ-ին կատարվելիք ձիարշաւին, աւելորդ չենք համարում տպագրել այդ ձիարշաւների ծրագրի մի քանի մանրամասութիւնները։

Առաջին օր. կիրակի, հոկտեմբերի 8-ին. 1) Մոսկվայի Կայսերական Ձիարշաւային Ընկերութեան մրցանակը 600 ռուբլի Ռուսական պետութեան մէջ ծնված չորս տարեկան յովտակ (жеребецъ) և մատակ (кобыла) ձիերի համար։ Տարածութիւնն է 6 վերստ. բաժնեվճարն է, ձիարշաւի նախընթաց օրը, իւրաքանչիւր ձիուց 20 ռուբլի, 4 տարեկան յովտակ ձիու վրայի ծանրութիւնը լինելու է 3 պուդ 25 ֆունտ. 5 տ.—3 պ. 30 ֆ., 6 և աւելի տարեկանինը—3 պ. 32 ֆ., մատակներինը 4 ֆ. պակաս։ Երկրորդ հասնող ձին ստանում է մրցանակի և բաժնեվճարի 20%-ը. 3-րդ ձին—կրկնակի բաժնեվճարը։

2) Արքունի Ձիամարզարանի մրցանակը 450 ռ. Կովկասում ծնված 4 տարեկան յովտակ և մատակ ձիերի համար։ Տարածութիւնն է 3 վերստ. իւրաքանչիւր ձիու համար 10 ռ.։ Առաջին ձին ստանում է 275 ռ., և բաժնվճարը, Բ. ձին—125 ռ., Գ. ձին—50 ռ., Դ. ձին—իր բաժնվճարը։

3) Արքունի Ձիամարզարանի մրցանակը 450 ռ. Կովկասում ծնված 5 տարեկան յովտակների և մատակների համար. տարածութիւնն է 5 վերստ. բաժնվճարը իւրաքանչիւր ձիու համար 10 ռ. Ա. ձին կը ստանայ 275 ռ., Բ. ձին—125 ռ., Գ. ձին—50 ռ. և Դ. ձին—իր բաժնվճարը։

4) Մոսկվայի Կայսերական Ձիարշաւային Ընկերութեան 400 ռ. մրցանակը Ռուսական պետութեան մէջ ծնված 3 տարեկան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԿԱՐՉԻ ԿԵԱՆՔԻՑ

(ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ)

IV

1883 թ-ի ապրիլ ամսի 22 էր, երբ Վլադիկավկասից առաւօտեան դուրս եկայ երկու ձի լըծած սայլակով դէպի Թիֆլիս։

Միայնակ լինելուս պատճառը մի վէճ էր, որ տեղի ունեցաւ Վլադիկավկասում, իմ և մի բժիշկուսանողի մէջ, որի հետ Պետերբուրգից մինչև այդտեղ միասին էինք հասել և պէտք է խոստովանվել, որ շատ համակրելի ճանապարհորդակից էր։ Վէճի առիթը եղաւ մի անմեղ բան։ Խօսակցութիւնը սկսվեց դրանով, որ ես յափշտակված անդադար կրկնում էի՝ «վերջապէս միակերպ, տափարակ բնութիւնից ազատվեցանք և շուտով տեսնելու ենք հրաշալի Դարիալի ձորը։» Իսկ նա, որ բոլոր ժամանակ «այո» և «ըհը»-ով էր համաձայնում հետս, վերջին անգամ, երևի (մինչև անգամ հիմա համոզված եմ) համբերութիւնից դուրս գալով և իրան կորցնելով, մանաւանդ, որ սաստիկ յոգնած ու ջարդված էր, կոպիտ պատասխանեց և այս բոլորի պատճառն այն եղաւ, որ նա նկարիչների և ներկարարների (маляръ) մէջ մի առանձին զանազանութիւն չը դտաւ։ Իսկ ես վերին աստիճանի վիրաւորված՝ առանց երկար մտածելու պատասխանեցի՝ «ուրեմն եթէ այդ տեսակէտից նայելու լինենք, կը գտնենք, որ բժիշկների և դասաբների մէջ էլ մի առանձին զանազանութիւն չը կայ։»

Մեր վէճը տեղի ունեցաւ Վլադիկավկասի փոստային ընդհանուր հիւրասենեակում, ուր մի անկիւնում սեղանի մօտ նստած ընթրում էր Թիֆլիսեցի մեզ անծանօթ մի երիտասարդ զինվաճառ, որ նոյնպէս միւս օրը մեկնելու էր դէպի հայրենիք։ Նա ըստ երևոյթին մեր խօսակցութեամբ ու վիճաբանութեամբ ոչ հետաքրքրվում էր և ոչ հասկանում էր բանի էութիւնը, բայց որքան մեծ եղաւ իմ զարմանքը, երբ նա մեր յոգնելուց ու լռելուց յետոյ, անսպասելի կերպով, «լօթի» Թիֆլիսցիներին յատուկ զուարճախօսութեամբ արտասանեց՝ «դոխտուրն էլ է լաւ, էն մէկէլնել է լաւ, իմ արիւ, ձիր արիւ, ինչ խիստ իք չարանում, լաւ մարդիկ»։

Այդ փոքրիկ կատակը այնպիսի կոմիկական ձայնով էր ասված ու այնպիսի ազդեցութիւն ունեցաւ վրաս, որ չը նայած իմ վրդոված սրրտին՝ ծիծաղս հազիւ խեղդեցի կոկորդիս մէջ։ Իսկ բժիշկը մի ակնթարթում վեր թռաւ տեղից ու վազեց միւս սենեակը, կարծեմ նոյնպէս ծիծաղը թաքցնելու համար։

—

Վլադիկավկասից դուրս գալով, մի քանի ժամից յետոյ արդէն գտնվում եմ Դարիալի ձորի մէջ։ Օդը մռայլ է և խոնաւ—ցուրտ։ Այ կողմ ապառաժներ, ձախ կողմ ապառաժներ, վերջապէս շուրջս ապառաժներ, որոնցից մէկի ստորոտով գնում եմ և անընդհատ նայում դէպի բարձր, որտեղից կիսաքանդ կամարների ձևով կախվել են գլխիվայր ահռելի ժայռեր։ Նրանք նայում են ցած և սարսափ են ինձ ներշնչում։ Եթէ մի կտոր, մի չնչին մաս պոկվի իր տեղից՝ ինձ սայլակիս հետ միասին փոշիի հետ կը հաւասարեցնէ։ Բնութիւնը մտադիր չէ եղել այստեղ ճանապարհ բանալու, բայց յանդուգն մարդը ինչեր չէ անում։

Ընթանում եմ դէպի առաջ և դէպի բարձր։ Մեր ուղին սկսվում է ժայռերի ստորին փեշերից. դա ոլոր-մոլոր պտոյտներով բարձրանում է դրանց կրծքի վրայով և դիմում է դէպի ձիւնապատ գագաթները, որոնք այս միջոցին ծածկվել են սպիտակ և մոխրագոյն ամպերով, այն երկնային սաւանով, որի միջից երբեմն երբեմն դուրս են ցայտում հատիկ հատիկ մշտականաչ եղևիններն ու մայրերը ու դարձեալ անհետանում։ Ապառաժները անընդհատ միմեանց յաջորդում են։ Նրանք բազմաթիւ և բազմաձև ծալքերով ձգվում են անդնդային մռայլ ձորի միջով և միախառնվում են անթափանցելի թանձր կապուտակի հետ, ուր վարագուրված է գարնան քնքոյշ երկնակամարը։ Ամեն տեղ տիրում է խլացուցիչ աղմուկ, որը յարմար կերպով ներդաշնակցում է այս վայրենի բնութեանը։ Այս աղմուկը, այս գոռում-գոչումը կատաղի թերէքին է պատկանում։ Դա գլխիվայր վազելով քարքարոտ յատակի վրայով և ամեն ինչ քարուքանդ անելով, անխընայ չպրտում է այս ու այն կողմ ժայռերի միջից պոկած ահագին բեկորներ։ Դա նման չէ սովորական արագահոս գետերին, դա կատաղի է և իր կատաղութիւնը հասցրել է գագաթնակէտին։ Կորցրել է իր գոյնը, կորցրել է բոլորովին իրան։ Հազարաւոր պտոյտներ անելով քար քարի է զարկում, ամեն ինչ գլորում, արմատախիլ անում, ջարդում փշրում է։ Շրջապատում է կղզիացած ամրապինդ ժայռերին և անէջք ու սպառնալիք է ուղղում՝ «չնչին արարած, եթէ ոչ այսօր, գոնէ վաղը անչուշտ կը պոկեմ տեղիցդ, կը զարկեմ ափին և փշրելով կը ոչնչացնեմ քո գոյութիւնը»։ Եռում է ամբողջապէս, բլուրներ ու անդունդներ է կազմում, նորից շուռ է գալի ու ջնջում իր հետ է տանում։ Այստեղ ծափ է տալի, այնտեղ ապտակում-ծեծում է, երբորդ տեղը խփում է գլուխը գետնին և մի ակնթարթում թռչկոտում է բարձր, շատ բարձր, թռուցիկ արձակելով ամեն կողմ։ Դա անգութ է, գռեհիկ ու հպարտ։ Չէ ուզում ջրին նմանվել, ամբողջապէս փրփուրի է փոխվել։ Մանր ու խոշոր սիրուն առուակներ ամեն մի քայլափոխում ծնունդ են առնում ապառաժների կրծքի միջից, կարկաչելով ուրախուրախ վազում են ներքև, ձորի մէջ կատարվող աղմկալից տեսարանը տեսնելու, բայց անողորմ հրէշը կլանում, խեղդամահ է անում այս անմեղ ծաղկահասակ արարածներին։

—

Ընթանում եմ դարձեալ դէպի առաջ և դէպի բարձր։ Ճանապարհը իր անթիւ պտոյտներով դիմում է դէպի գագաթները. նա ոլորվելով ապառաժների վրայով աստիճանաբար նուազում է ու բարձր, ամպերի մօտ մոխրագոյն թելի է նմանում ու վերջապէս անյայտանում։ Ճանապարհի վրա, մի քանի հեռու տեղեր չարժական կէտեր են նկատվում. նրանք անշուշտ մարդիկ են, լեռնեցիք են իրանց բեռնակիր սայլակներով, կամ հարուստ քաղաքացիք են չքեղ կառքերի մէջ բազմած։ «Ահա ոքտեղ է երևում մարդու ոչնչութիւնը բնութեան դէմ», ակամայ անցնում է մտքովս։ Այս տեսարանը յիշեցնում ինձ շատ անգամ տեսած մրջիւնների արշաւանքը դարևոր կաղնիների ու ընկուզենիների վրա։ Մտաբերում եմ այս միջոցին մարդկային հանճարի զանազան վսեմ արտադրութիւնները՝ կոթողներ, տաճարներ, ամրոցներ, մտքովս տեղափոխում եմ նրանց այստեղ, համեմատում եմ բնութեան այս ահարկու ստեղծագործութիւնների հետ և հիասթափվում։ Ահա նշմարվում են հեռաւորութեան մէջ սպիտակ փոքրիկ կէտեր, նրանք կամաց կամաց աճում են։ Մենք դիմում ենք դէպի այնտեղ, դա «Կազբէկ» կայարանն է։

—

Անցնում է կէս ժամ և ես դարձեալ շարունակում եմ ճանապարհս։ Ժամը երկուսն է։ Զարագուժ սև սև ամպերը իրանց դաժան դէմքերով անշտապ սողում են երկնքի վրա և չփվելով

յովտակ և մատակ ձիերի համար։ Տարածութիւնն է 2 վերստ 133 սաժէն։ Երկրորդ ձին ստանում է մրցանակի և բաժնեվճարի 20%, իսկ երրորդը —կրկնակի բաժնեվճարը։

5) Թիֆլիսի Ձիարշաւային Ընկերութեան մրցանակն է արծաթէ իր—ամեն հասակի, երկիրների և ցեղի ձիերով լինելու է ջէնտըլմէնական արգելքներով ձիարշաւ։ Տարածութիւնը 2 վերստ. բաժնեվճարն 10 ր. իւրաքանչիւր ձիուց՝ ձիարշաւի նախընթաց օրը։ Ա. ձին կը ստանայ—իրը. Բ.-ը—բաժնեվճարը։

Երկրորդ օր, կիրակի, հոկտեմբերի 15-ին. 1) Թիֆլիսի Ձիարշաւային Ընկերութեան մրցանակը 350 ր. ամեն երկրների և ցեղի 4 տարեկան և բարձր, ձիերի համար։ Տարածութիւնն է 3 վերստ. բաժնեվճարն է իւրաքանչիւր ձիուց 10 ր., ձիարշաւի նախընթաց օրը։

2) Թիֆլիսի Ձիարշաւային Ընկերութեան 150 ր. մրցանակը Կովկասում ծնված 3 տ. յովտակ և մատակ ձիերի համար։ Տարածութիւնն է 2 վ. 133 սաժէն. բաժնեվճարն է իւրաքանչիւր ձիու համար 10 ր., ձիարշաւի նախընթաց օրը։

3) Արքունի Ձիամարզարանի մրցանակ 200 ր. Կովկասում ծնված 4 տարեկան յովտակ, 4 և 5 տարեկան մատակների համեմատ։ Տարածութիւնն է 3 վերստ, բաժնեվճարն է ամեն մի ձիուց 5 ռուբլի՝ ձիարշաւի նախընթաց օրը։ Ա. ձին կը ստանայ 150 ր. և բաժնեվճարը, Բ.-ը՝ 50 ր., Գ.-ը՝ երկապատիկ բաժնեվճար։

4) Արքունի Ձիամարզարանի 500 ր. մրցանակը բոլոր երկիրների 4 տարեկանից վեր յովտակ և 4 և 5 տարեկան մատակ ձիերի համար։ Տարածութիւնն է 3 վերստ. բաժնեվճարն է ամեն մի ձիու համար 10 ռուբլի՝ ձիարշաւի նախընթաց օրը։ Ա. ձին կը ստանայ—400 ր., Բ.-ը 100 ր., Գ.-ը—իր բաժնեվճարը։

5) Թիֆլիսի Ձիարշաւային Ընկերութեան մրցանակը—արծաթէ իր, ամեն հասակի, երկիրների և ցեղի ձիերով ջէնտըլմէնական ձիարշաւի համար։ Տարածութիւնն 1 2 վերստ. բաժնեվճարն է ամեն մի ձիու համար 5 ռուբլի՝ ձիարշաւի նախընթաց օրը։

6) Ժողովրդական ձիարշաւ Կովկասում ծնված 4 տարեկանից վեր յովտակ և 4 և 5 տարեկան մատակ ձիերի համար, 100 ռուբլի, ամեն մէկ ձիուց 3 ռուբլի բաժնեվճարով ձիարշաւի նախընթաց օրը մինչև ժամը 12-ը։ Առաջին ձին կը ստանայ 50 ռուբլի, երկրորդը—30 ռուբլի, երրորդը—20 ռուբլի և 4-ը—իր բաժնեվճարը։ Ցանրութիւնը կամաւոր է։ Տարածութիւնն է 4 վերստ։ Այն ձիերը, որոնք վաղ ստացել են ժողովրդական ձիարշաւում առաջին մրցանակ կամ Արքունի Ձիամարզարանի որ և է մրցանակը, այս ձիարշաւին չեն կարող մասնակցել։

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Օգոստոսի 20-ին

Պէտք է յիշենք, թէ որպիսի անտարբերութեամբ է գործում այստեղի այն մասնաժողովը, որը պէտք է աշխատէր Շիրակի արդիւնաբերութիւնը ուսումնասիրել և ներկայացնել Թիֆլիսի առաջիկայ գիւղատնտեսական ցուցահանդէսը։

Մասնաժողովի հաւաքած առարկաները այնքան սահմանափակ վիճակի մէջ են, որ կարելի է հաստատապէս ասել, որ միայն երկրորդական առարկաներից պէտք է համարել, այն ինչ արհեստագիտական արդիւնաբերութիւնները միանգամայն արհամարհված են այդ ժողովածուի մէջ։

Այդպէս, օրինակ, ալէքսանդրապոլցի քարագործ-որմնադիր Մնացական Թէյմուրազեանց շինել էր շիրակի քարից մի գեղեցիկ շինուածք, որը, փոքրիկ դրութեամբ, ներկայացնում է «Անիի յաղթական կամարը»՝ ամենաճիշդ նմանութեամբ, բայց մասնաժողովը մերժեց իր հաշւով ուղարկել ցուցահանդէս, թէև շինուածքը բաւական համակրութիւն գտաւ հետաքրքիր անձերից։

Եւ այդպիսով, Ալէքսանդրոպոլի մասնաժողովը ապացուցեց, որ չը գիտէ գնահատել արհեստը և արդիւնաբերութիւնը, նոյն իսկ երկրի հարազատ համարածը, որի փոխարէն հաւաքել են այնպիսի ձեռագործներ, որոնք Շիրակի արտադրութիւններ չեն, այլ օտար են։ Պ. Մնացական Թէյմուրազեան ինքն անձամբ մտադիր է ներկայացնել այդ շինուածքը ցուցահանդէս, և հաստատ համոզված ենք, որ ուշադրութեան և խրախուսանքի պիտի արժանանայ։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, օգոստոսի 4-ին, Թիֆլիսի Արհեստաւորաց դպրոցում մի ցաւալի դէպք պատահեց։ Վերոյիշեալ դպրոցի վրաց բաժանման 3-դ դասատան մի աշակերտ, Կակաբաձէ աղգանունով, որը վերաքննութիւն ունէր երկու առարկաներից, վերաքննութեան ժամանակ կրկին կտրվում է և այդ պատճառով մնում է կրկին նոյն դասատան մէջ։ Այդ հանդամանքը այնքան գրգռել էր նրան, որ օգոստոսի 5-ին, առաւօտեան 7 ժամին, Կակաբաձէ գնում է ուսումնարան և դիմելով ուսումնարանի դերեկտոր պ. Խարկովին մի քանի հարցերով, անմիջապէս դանակը խրում է դիրեկտորի կողքը, բաւական վտանգաւոր վէրք հասցնելով նրան։ Կակաբաձէին կալանաւորեցին։ Ասում են, որ Կակաբաձէ հարբած դրութեան մէջ է եղել։

—

Արտասահմանեան մի հայ լրագրում կարդում ենք հետեւեալը. «Մեզ կը հաղորդեն, որ Կ. Պոլիս գտնված հայ եպիսկոպոսները մի համագումար ժողով գումարելով Պատրիարքարանի մէջ, իրանց խորհրդածութեան նիւթ ըրած են ազգին արդի հարստահարված և յուզեալ վիճակը, և երկար խորհրդածութիւններէ յետոյ որոշել են մի խընդրագրով դիմել Սուլթանին և ուղղակի իրան ներկայացունելով ամեն բան ճշդութեամբ, խնդրել որ վերջ տրվի այլ ևս հայ ազգի կրած հարստահարութիւններին։ Բոլոր եպիսկոպոսներ ուխտելով խոստացեր են ստորագրել այդ հանրագիրը»։

—

Արտասահմանի մի հայ լրագրում կարդում ենք, որ Կալկաթայի մէջ հայ երիտասարդներից կամաւոր զինուորների մի առանձին խումբ է կազմվել, որ զինուորական կրթութիւնների մէջ է վարժվում և իր տարեկան մրցանակաբաշխութեան հանդէսը կատարել է։ Այժմ լրագիրը հաղորդում է, որ զանազան տեղերում էլ այդ եռանդը սկսել է արծարծվել գաղթական հայերի մէջ։ Ամերիկայի Միացեալ Նահանգների մէջ էլ տեղացի մի քանի հայեր կամաւոր զինուոր են գրվել կրթվելու համար, ինչպէս և Մարսէլից էլ այս վերջին ժամանակներ 2 հայ երիտասարդներ մտան Ֆրանսիայի զինուորական ծառայութեան մէջ «օտարայանների լեգիոնի մէջ (légion étrangère) ընդունվելով։

—

Քաղաքային թատրոնում շարունակվում են օպերային ներկայացումներ։ Մինչև այժմ ներկայացրած է երեք օպերա. «Жизнь за Царя», «Ֆաուստ» և «Կարմէն», որոնց մէջ երգել են մեծ մասամբ Թիֆլիսին անծանօթ դերասաններ և բոլորն էլ գրեթէ անաջող։ Միայն օր. Գէյդնէր, որ երգում էր առաջին երկու օպերայում, ունեցաւ փոքր ի շատէ աջողութիւն. նա ունի հիւթալի կօնտրալտօ, որ դուրեկան է ցածր նոտաներում, բայց աւելի բարձր նոտաներում շատ խուլ է, ունի գեղեցիկ բեմական դէմք, բայց իրան պահել չը գիտէ բեմի վրա։ Բաս պ. Բերչեվիչ, որ երգում էր «Ֆաուստի» մէջ Մեֆիստոֆէլի դերը, ունի ահագին ձայն, բայց երգում է կոպիտ կերպով, առանց որ և է զգացմունքի, աշխատելով դուր գալ բաեօկին։ Տենոր պ. Տոմասունի փոքրիկ ձայն, որ օրկեստրի մի փոքր բարձր ածելիս գրեթէ չէ լսվում։ Դէմքն ու հասակը բոլորովին բեմական չեն, բեմի վրա իրան պահել չը գիտէ և նրա շարժմունքները միայն ծիծաղ են յարուցանում։ Տ. Լիւբատովիչ, որի մասին մինչև բեմ դուրս գալը բաւական բէկլամներ են եղած, միանգամայն չարդարացրեց իր վրա դրած յոյսերը. նա ունի շատ թոյլ մեցո-սոպրանո, որ նոյնպէս յաճախ չէ լսվում, խաղը չափից դուրս մտածված է, այնպէս որ շատ արհեստական է երևում և ոչ մի տպաւորութիւն չէ թողնում։ Օր. Կալեանովսկու դերբիւրը նոյնպէս անաջող պէտք է համարել։ Հներից մնացել են՝ տ. Զարուշեանյա և պ. Մօլչանովսկի, դէպի որոնց հասարակութիւնը բաւական անտարբեր է։ Մնում է միայն պ. Տարտակով, որ առ այժմ միայն միայնակ վայելում է հասարակութեան համակրութիւնը։ Ցղամարդկանց խորը աւելի լաւն է անցեալ տարվանից, բայց կանանցը շատ թոյլ է։ Օրկէստրի մասին առ այժմ ոչինչ չէ կարելի ասել, քանի որ նա դեռ լրացրած չէ։

—

Լօնդոնում, ինչպէս տեղեկանում ենք արտասահմանեան լրագիրներից, նորերումս կազմվել է նշանաւոր անգլիացիներից բաղկացած մի ընկերութիւն, որը նպատակ ունի հովանաւորել «Հայոց հայրենասիրական ընկերութիւնը»։ Այդ ընկերութիւնը կրում է comité de patronage (խընամակալ մասնաժողով) անունը և նրա մէջ մասնակցում են անգլիական ազատամիտ (գլադստոնեան) կուսակցութեան պատկանող հետեւեալ յայտնի անձինք. Մունդէլլա (նախկին մինիստր), Բուքանան, Էդուարդ Գրէյ, Պօլտն, Ջէմս Բրայս (նախկին պետական փոխ-քարտուղար արտաքին գործերի), Զաննինգ, Զասպէր Մօր և Ֆրէնչիզ Սաիմսնը։ Այդ բոլոր անձինք անգլիական պարլամենտի անդամներ են։ Մասնաժողովի գանձապահ ընտրված է Սըմմէրս, իսկ նրա օգնական Պետրոս Աղանուր։ Լօնդոնում ֆրանսերէն և հայերէն լեզուով հրատարակվող «Հայաստան» թերթի խմբագրութիւնը այս օրերս ամենուրեղ հրաւէրներ է ուղարկել, խնդրելով որ ցանկացողները յիշեալ ընկերութեանը նիւթապէս աջակցեն և նպատակներն ուղարկեն պ. Սըմմէրսի անունով Լօնդոն, հետեւեալ հասցէով. Mr. W. Summers, membre de la Chambre des Communes, Réform Club, Pall Mall, London S. W. Այդ հրաւէրները, որ իրանց անունով ստորագրել են «Հայաստան» լրագրի խմբագրապետ պ. Սըվազլեան և նոյն լրագրի քաղաքական մասի խմբագիր պ. Բրուսալի, յայտնում են, որ վերջին ժամանակները թերթը անկանոն էր լոյս տեսնում, իսկ ներկայ տարվայ հոկտեմբերի 1-ից

բուսազուրկ լեռների հետ՝ անցնում են։ Կապուտակ երկինքը ամբողջապէս քողարկված է, միմիայն երբեմն երբեմն դուրս են ցայտում արեգակի նուազ ճառագայթները, բոպէապէս չամանդաղ են տարածում ձորի այս ու այն տեղը ու արագութեամբ իսկոյն ջնջվում։

—Փոթորիկ է լինելու, հարցնում եմ ձիավարին։

—Այո, պատասխանում է անհանգստութեամբ ու թափ է տալի գլուխը։

Ամպերը հետզհետէ թանձրանում են, իջնում են ահաւոր դէպի երկիր, ձորը լցվում է աղջամուղջով, խաւարում է ամեն ինչ և օդի մէջ տիրում է մի առանձին հոտ, որ յիշեցնում է ծովային խոնաւութիւն։ Բարձրից նայում եմ ցածր, դէպի անդունդ, ուր Թերէքը շարունակ իր գոռում-գոչումով ընթանում է, բայց այս գոռում-գոչումը այս անգամ սիրտ ճնշող ողբի է նմանում, որով վարձես բնութեան խռովութիւնն ու արհաւիրքն է գուշակում։ Ստէպ ստէպ սլանում են մօտովս վախեցած թռչունները և շտապում դէպի իրանց բները։ Լեռնեցիները սայլերը կանգնեցրել են ճանապարհի ապահով անկիւնում, նեցուկներ են տուել անիւների յետեից և պատրաստվում են սայլերի տակ մտնելու։

Իմ ձիավարը մերթ խրախուսում է իր ձիերին, մերթ բարկանում, սպառնում է, աշխատում է ամեն կերպ ձիաների քայլերը արագացնել։ Խելացի անասունները կարծես նոյնպէս զգում են անխուսափելի վտանգը։ Նրանք ամենահաւատարմութեամբ աշխատում են, ճիգ են թափում, տեղը շուտով հասնելու համար, բայց այս անողորմ զառիվայրը ուժասպառ է անում նրանց։

Ցանկարծ հրեղէն փայլը մի ակնթարթում փռվում է բնութեան մէջ ու հանգչում, սրան յաջորդում է մի խուլ ու հեռաւոր ոռոտում ու դարձեալ լռում ամեն ինչ։ Միմիայն ներքև, ձորի մէջ Թերէքը շարունակում է իր ողբը։ Դա այլ ևս կատաղի գազան չէ, դա այժմ արտասուալից աղաղակներ է արձակում։ Փայլակը նորից դուրս է պրծնում ամպերի միջից, կրակոտ մի քանի ցնցումներ է գործում ու դարձեալ տեղ է տալիս խաւարին, սրան հետեւում է ոռոտումն ու խոշորխոշոր կաթիլները ուժգին զարկվում են գետնին, ուր և դրոշմում են սև կէտեր։

Ահրելի ժայռեր, անդնդային ձոր, անողորմ գետ, դժոխային ամպեր, տարօրինակ խաւար,—այս բոլորը դաշն են կապել իրար հետ խաղ խաղալու, բոլորովին չը նկատելով իրանց գըրկում սրտնեղված կենդանի արարածների գոյութիւնը։ Նորից հրեղէն շանթեր, նորից սարսափելի խլացուցիչ ճայթումն։ Դղրդում է երկիր ու արձագանքը մի քանի անգամ կրկնվում է խառնաշփոթ ձորերի մէջ։ Անձրևը սկսում է առատութեամբ թափվել լեռնային յատուկ շխշխոցով և միախառնվում է արդէն ձորի խորքերում անհետացած Թերէքի ձայնի հետ։ Այս վայրենի համերգը շարունակվում է։ Երբեմն ընդհատվում է ամպերի ոռոտումից, երբեմն խանգարվում է ձիավարի անբաւական ձայներից, բայց դարձեալ շարունակվում է։

—Չէ՞ որ առաջարկեցին ձեզ մի երկու ժամ սպասել կայարանում, նկատեց ինձ ձիավարը, երևի ձեզ հաճելի է այսպիսի բանը։

—Դու հանգիստ կաց, ինչ լինելու է թող լինի, ես չեմ վախենում։

—Երևում է, որ դուք դեռ ևս չէք տեսել այստեղի «զաւալները».... «Նուռու վասկ», եղաւ պատասխան, զգուշութեամբ մարակելով ձիուն։

Ես նստած եմ սայլակի մէջ անշարժ, կռացած և աչքերս կիսաբաց, որովհետև անձրևի ուժեղ շիթերը թեք ուղղութեամբ ուղղակի երեսիս են զարկում։ Աչք եմ դարձնում աջ կողմ և նկատում եմ, որ ժայռերի միջից ամեն մի քայլափոխում քարեր են պոկվում ու գլորվում ցածր, բայց բարեբաղդաբար ոչ շատ խոշոր։ Փայլակ, կայծակ, ոռոտումն անդադար յաջորդում են միմեանց և կարծես կործանում են աշխարհ, իրար հետ են խառնում երկինքն ու երկիր։

—

Ճանապարհը շարունակ բարձրանում է։ Անձրևային կաթիլները զգալի կերպով մանրանում ու բազմանում են։ Ես փոքր առ փոքր ընկղմվում եմ թխադոյն գոլորշիի մէջ։ դա աստիճանաբար թանձրանում է։ Դարձեալ քառորդ ժամ և ես պատած եմ կատարեալ խաւարով, բայց սա գիշերային խաւար չէ, սա լեռնային մի մութնոտ է, որ անկարող եմ համեմատել մի այլ բանի հետ, միտքս պարզելու, ցանկացածս արտայայտելու համար։ Այլ ևս բան չեմ տեսնում, նոյն իսկ ձիաները միրաժի նման աղօտ կերպով են նշմարվում։ Զգում եմ ինչպէս մի տեսակ թաց փոշի է մագվում երեսիս։ Գոռումն ու գոչումն, աղաղակն ու ճայթիւնը դարձեալ շարունակվում են, բայց օ զարմանք, այս բոլորը կարծես ներքև, ստորերկրեայ աշխարհումն է կատարվում։ «Գուցէ ամպերի մէջ եմ գտնվում» մտածում եմ ես։ Երբեմն ականջիս հասնում են մոտիկից մարդկանց ձայներ ու անիւների ճռճռոցը։ Քաշվիր աջ կողմ, լսելի է լինում ձիավարիս միակերպ ձայնը։

Ցանկարծ ցնցվում է մեր սայլակը ու կանգնում։

—Թուլ ես, որ չես լսում «քաշվիր» բառը, այ սանն.... աւելացրեց ձիավարս Ղազանի թաթարի բարբառով ու մտրակեց հարուածը հասցնելով մէկին։ Նա էլ փոխադարձ մի քանի յիշոցներ ուղղեց սրա հասցէին օսերէն, մի և նոյն ժամանակ աշխատելով ազատել իր երկանիւ սայլը։ Անցնում է դարձեալ քառորդ ժամ և այլ ևս անձրևի նշոյլն անգամ չէ նկատվում, բայց զգում եմ թէ ինչպէս շարունակ թրջվում եմ։ Օդը ցուրտ է և վերին աստիճանի խոնաւ։ Հագուստս սաստիկ ծանրացել է, ուսերս, մէջքս ցաւում է։

—

Խաւարը անհետացել է։ Արևի մեղմ ճառագայթները թափանցում են նօսր մառախուղի միջով ու ախորժելի ջերմութիւն է բնութեան պարգևում։ Ահա լեռների գագաթները, ահա նորից հսկայական ապառաժները, որքան արցունքներ են թափում նրանք։ բայց այդ ուրախական արցունքներ են։ Բնութիւնը սկսում է ժպտալ։ Թերէքն անդամ, որ անյայտացել է անդունդների մէջ, այս միջոցին պարելով ու ծիծաղելով է մեզ յիշեցնում իր գոյութիւնը։ Ահա մաքուր, անարատ գոլորշիներ ինչպէս համեստութեամբ բարձրանում են երկրի վրայից։ Ահա կրևում են լեռների գագաթներին կպած ինչ որ կէտեր, որոնք նման են ծիծեռնակների բոյներին, այնտեղ անշուշտ մարդիկ են ապրում։ Թռչունները ուրախուրախ սլանում են մաքուր օդի մէջ զանազան ուղղութեամբ։ Ձիաները նոյնպէս աշխոյժ ու զուարթութիւն են ստացել։ Ճանապարհի վրա անձրևից գոյացած ջրերը պլպլում են արևի ճառագայթների հետ։ Որքան դուրեկան է շունչ առնել այս անարատ օդի մէջ, որքան ախորժելի է բնութեան այս բոպէն։ Այլ ևս չեմ ցանկանում յետ նայել, ուր անդունդների մէջ դարձեալ շարունակվում է հոգեզմայլ տեսարանը։ Մօտեցել ենք Կօբի կայարանին, դա հեռուից փայլում է սպիտակ գոյներով ու ձեռք է մեկնում ինձ այնտեղ հանգիստ առնելու համար։

Գ. Բաշինջաղեան

ամիսը մի անգամ կը հրատարակվի։ Ապա, եթէ միջոցներ ունենայ խմբագրութիւնը, լրագիրը լոյս կը տեսնի և ամիսը երկու անգամ։ Նորերումս «Մշակի» քանասիրականի մէջ «Պարիզի հայ գաղթականութեան» մասին, մենք ասեցինք արդէն որ «Հայաստան» թերթի նպատակն է ծանօթացնել Եւրոպան թիւրքաց Հայաստանի վիճակի հետ և Եւրոպայի ուշադրութիւնը դարձնել այդ երկրի վրա։ Մենք կրկնում ենք, որ մեծ նշանակութիւն ունի հրատարակել այդ տեսակ թերթ ֆրանսերէն լեզուով, քանի որ ֆրանսերէնը մրցող չունի, որպէս բուն միջազգային և ամբողջ քաղաքակիրթ մարդկութեանը հասկանալի լեզու։

—

Անգլիական լրագիրները լսել են, որ եւրոպական մի քանի մեծ պետութիւններ դիտաւորութիւն ունեն հրաւիրել Բերլինի դաշնագիրը ստորագրող բոլոր եւրոպական մեծ պետութիւններին կոնֆէրէնցիա կազմել Կրիտէի և Հայաստանի խնդիրը վճռելու համար։

—

Այս օրերս պ. Կարա-Մուրզա վերադարձաւ Ղրիմից և անցնելով Թիֆլիսի վրայով ուղևորվեց Բագու։ Սեպտեմբերի 8-ին նա սկսելու է Բագուի մէջ իր մասնաւոր դասերը, իսկ խմբերգական դասաւանդութիւնը սկսելու է սեպտեմբերի 10-ին։ Լսում ենք որ պ. Կարա-Մուրզա դիտաւորութիւն ունի կազմել Բագուի մէջ և հայ կանանց երգեցիկ խումբ։ Այդ խմբի կազմակերպութիւնը լինելու է հոկտեմբերի 1-ից։

—

Այս օրերս առիթ ունեցանք ծանօթանալ մի ալէքսանդրոպոլցի հայ երիտասարդ արհեստաւոր Զօրամբ Միրզոյեանցի հետ, որը հնարել է մի յայտնի մեքանիզմով ինքն իրան օրօրվող օրօրոց, նոր ձեի թոռը ձուկ որսալու համար և քար քանդելու մեքենան։ Օրօրոցը շատ հետաքրքիր է. նա քոքվում է և ապա ինքն իրան օրօրվում է և մի և նոյն ժամանակ օրօրոցին յարմարեցրած մեքանիզմի միջոցով երեխային նանիկ է երգում։ Ձուկ բռնելու թոռը ունի մէջտեղ յարմարեցրած մի լապտեր, այնպէս որ ձկները լոյսից գրաւվելով, հաւաքվում են թոռի շուրջը և շատ հեշտութեամբ բռնվում են։ Քար քանդող մեքենան այն յարմարութիւնն ունի, որ ինքն իրան քանդում է ժայռը, այնպէս որ աղատում է մշակներին ժայռի տակ մտնելու և նրան քանդելու վտանգից։ Ցանկալի է, որ մեր այդ ինքնուրոյն մեքենագործի հնարած իրերը ներկայացվէին Կովկասեան ցուցահանդիսում։ Բայց այդ իրեր հնարող Միրզոյեանց, ինքն արհեստաւոր լինելով և իր քաղաքում օրական աշխատանքով ապրելով, այնքան նիւթական միջոց չունի որ կարողանայ ցուցահանդիսի տեղողութեան ժամանակ, որպէս էկսպոնէնտ, պարապ մնալ Թիֆլիսում։ Ցանկալի է որ ցուցահանդիսի վարչութիւնը նրան մի որ և է գործ տայ ցուցահանդիսում, որպէս զի նա կարողանայ ապրել Թիֆլիսում ցուցահանդիսի տեղողութեան ժամանակ։

—

Մեզ գրում են, որ ԿԱՐՍՈՒՄ այս տարվայ ըսկզբում ալիւրը ծախվում էր 1 ր. 50 կ. պուդը, բայց վերջին ժամանակներս ծախվում էր 1 բուբլով։ Այժմ, որովհետև գիւղացիք զբաղված են կալսելով և ալիւր չեն բերում քաղաքը, ալիւրի գինը կրկին բարձրացաւ մինչև 1 բուբլի 30 կոպէկ։

—

Լրագիրները հաղորդել են արդէն, որ օգոստոսի 21-ին (սեպտեմբերի 2-ին) պիտի բացվէր Շուվեդիայի Ստոկհոլմ քաղաքում արևելագէտների VIII միջազգային կոնգրէսը։ Այդ կոնգրէսին նախագահում է Շվէդիայի թագաւորը և կոնգրէսը նպատակ ունի ուսումնասիրել արևելքը բուն գիտական տեսակէտից։ Կոնգրէսին մասնակցող 700 անդամների թւում կան շվէդացիք, նորվէգացիք, գերմանացիք, աւստրիացիք, ունգարացիք, բէլգիացիք, բրազիլեացիք, դանիացիք, սպանիացիք, իտալացիք, ֆրանսիացիք, ամերիկացիք, եգիպտացիք, ռուսներ, ֆինլանդացիք, անգլիացիք, իրլանդացիք, յոյներ, հնդկացիք, եապօնացիք, հոլլանդացիք, պորտուգալիացիք, պարսիկներ, ռումինացիք, սերբիացիք, սիամցիք, չվեյցարացիք և թիւրքեր։ Ռուսների ցուցակում գտնում ենք մի վրացու ազգանուն, այն է Ալէքսանդր Ցագարելի (Պետերբուրգի համալսարանի վրաց լեզուի պրոֆէսոր) և չորս հայերի ազգանուններ, որոնք են. Թումայեանց (Արշակ), Եղեան (կարապետ), Յովհաննիսեան (Աբգար) և Ամիրխանեանց (Աբրահամ)։

—

Գանձակի գաւառի Զարգալու գիւղից մեզ գրում են. «Հունձը մեզ մօտ այս տարի շատ անպտղ հետևանք ունեցաւ. հունձից առաջ արտերի վրա նայելով, կարելի էր առատութիւն սպասել, բայց կալսելուց յետոյ երևաց, որ գիւղացու յոյսը խաբուսիկ էր։ Վերին ատիճանի վատ ցորեն է դուրս գալիս և սպասածից կիսով չափ պակաս։ Անցեալ տարի մէկ «վէնչակից» (30 խուրձ) դուրս էր գալիս միջին թւով 10 խան, այս տարի նոյն փէնչակից դուրս է գալիս 3½ խան։ Բաւական չէ, որ սերմի համար այս տարվայ ցորենը բոլորովին պէտք չէ, բայց շատերը չունեն էլ այդ ցորենից մինչև անգամ սերմի համար. և այսպիսի վատ հունձ եղել է համարեա ամբողջ Գանձակի նահանգում։ Գարու հունձը համեմատաբար աւելի լաւ է. բայց մեր գիւղացիք առհասարակ գարի շատ քիչ են ցանում։ Մեր գիւղացին գարու հաց չէ ուտում. նա գործ է ածում գարի միայն տնային անասունների համար. իսկ ծախելու համար վարելու բաւականաչափ հող չունի նա։ Կովկասեան ցուցահանդիսի համբաւը հաղիւ հազ հասել է և մեր գիւղերը. բայց գիւղացիք բոլորովին չեն ցանկանում և աղքատութեան պատճառով չեն էլ կարող ուղարկել իրանց հաշվով իրանց արտադրութիւնները ցուցահանդիսում։ Նրանք կարծում են, որ ամեն մի բան, որ կուղարկվի ցուցահանդիսին, կորած կը լինի նրանց համար. բացի դրանից, կարծում են, որ ցուցահանդէսը իբրև թէ մի առիթ է, որով ցանկանում են նրանց կաչքի վրա նոր հարկեր դնել։ Շատ ցաւալի է, որ գիւղացիներին չեն հասկացրել ցուցահանդիսի նշանակութիւնը, որովհետև մեր գաւառամասը կարող էր շատ բան ցոյց տալ իր արտադրութիւններից։ Իբրև տնայնագործութեան արդիւնաբերութիւն կարող էին ի ցոյց դնել զանազան «նախշուն» կապերտներ, երբեմն գեղեցիկ ուղօրներով. կոշտ բրդից գործած միգոյնի կապերտներ էլ, որոնց գիւղացին գործ է ածում իր տան պէտքերի համար, զանազան մեծ թէ փոքր խալիչաներ, գոյնզգոյն խուրջիններ. փափուկ բրդից գործած՝ այսպէս ասված «տափի շալեր», որոնք բաւական նուրբ են և զանազանվում են միւս տեսակ շալերից, «հորի» շալերից, որոնք աւելի հաստ են և գործած են կոշտ բրդից. «նաչխուն» գուլբաներ, որոնք աւելի նուրբ են, քան թէ միգոյնի գուլպանները։ Միւս տեսակ արդիւնաբերութիւններից մեր գիւղացին կարող էր ի ցոյց դնել ոչխարի բուրդ, թէ մերինոսների տեսակից և թէ դմակաւորներից. մեր դարբինները կարող էին ուղարկել իրանց շինած գործիքները և, որ ամենագլխաւորն է, իրանց շինած գութանը։ Բանը նրանումն է, որ 5 տարի առաջ մեր գիւղացիներից մի քանիսին աջողվեց բերել տալ Թիֆլիսից նոր ձեի երկաթի գութաններ, բայց վարել նրանցով չը կարողացան, գուցէ նրա համար, որ չը գիտէին թէ ինչպէս վարվել նոր գութանի հետ։ Մեր վարպետ դարբինները, եթէ կարելի է այսպէս ասել, կատարելագործեցին այդ ձեի գութանը, այսինքն յարմարեցրին տեղական պահանջներին, մի քիչ խառնելով դրանց հին, իրանց ձեի գութանների հետ, այնպէս որ, փոխանակ գործ դնելու 8 լուծ եզներ, ինչպէս առաջ էր, նոր գութանի համար հարկաւոր է միայն 4 ջուխտ, և այդպիսի գութանները մեծ աջողութիւն ունեցան ոչ միայն մեր գիւղում, այլ և շրջակայ գիւղերում։ Շատ ցանկալի կը լիներ տեսնել Կովկասեան ցուցահանդիսում մեր վարպետների աշխատութեան այդ պտուղը։»

—

Թիֆլիսից հինգ վերստ հեռաւորութեան վրա գտնվում է Շավ-Նաբադ կոչված մի ուխտատեղի, ուր ամեն օր յաճախում են բազմաթիւ ուխտաւորներ։ Այդ ուխտատեղին ամեն տարի չոչափելի արդիւնք է տալիս Ներսիսեան հոգևոր դպրոցին։ Սակայն այդ ուխտատեղում մշտապէս բնակվող գինեվաճառ երեցփոխը, իր վատ բնաւորութեամբ այնքան է զզուեցրել ուխտաւորներին, որ հետզհետէ ատիճանաբար պակասում է նրանց թիւը, և հետևաբար գուցէ Ներսիսեան դպրոցը ապագայում բոլորովին զրկվի այդ ուխտատեղուց ստացվող եկամուտից։ Ցայտնի չէ թէ ինչ հիման վրա յիշեալ երեցփոխը ամեն մի ուխտաւորից պահանջում է կամ նրա բերած մատաղացու ոչխարի ամբողջ կէսը, կամ 1 բուբլի 10 կոպէկ փող, և այդ ապօրինի պահանջին ընդդիմացողին արտաքսում է ուխտատեղուց։

—

Արդէն բոլորովին աւարտվեց և այս կիրակի, սեպտեմբերի 8-ին, հանդիսաւոր կերպով պէտք է օծվի Թիֆլիսի մօտ գտնվող Շավ-Նաբադի կոչված ուխտատեղու այն չքեղ զանգակատունը, որը իր հաշվով կառուցել է Թիֆլիսեցի վաճառական պ. Գրիգոր Բայանդուրեանց, ծախսելով երկք հազար բուբլուց աւելի փող։ Պէտք է նկատել, որ չը նայելով յիշեալ պարոնի այդ խոշոր զոհաբերութեանը, նրա վարձած արհեստաւորներին, որ մինչև զանգակատան աւարտելը գիշերում էին եկեղեցապատկան սենեակներից մէկում, երբեմն գինեվաճառ երեցփոխը հայհոյելով և անպատուելով դուրս վռնդեց սենեակից, և խեղճերը մի քանի գիշեր անցկացրին բաց օդում անձրևի և քամու տակ։

—

Կիրակի, օգոստոսի 3-ին, մի դպրոցի աշակերտ, մտնելով ուսումնարանի ծառայի սենեակը, վերցնում է նրա հրացանը, ճնճղուկներ սպանելու դիտաւորութեամբ։ Հրացանը ուղղում է ուսումնարանի դիմացի շինութեան վրա նստած ճնճղուկների վրա և ճնճղուկներին սպանելու փոխարէն, գնտակը դիպչում է այդ բօպէում հանդիպակաց շինութեան պատերը ներկող մի բանւորի ծնկան, այնպէս որ գնտակը անցնում է ծնկան փափուկ մսի միջով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔՊԵՏԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆԳԼԻԱՆ

—

Նոր չեն այն լուրերը, որոնք հաղորդում են թէ Անգլիան ցանկութիւն ունի այսպէս թէ այնպէս միանալու երեքպետեան դաշնակցութեանը։ Ինքն անգլիական կառավարութիւնը միշտ խոյս է տուել այդ մասին մի որոշ բան յայտնելուց, թէև պակաս չեն մինչև այժմ էլ այդ կողմնակի հաղորդագրութիւնները, որոնցից երևում է, որ անգլիական այժմեան պահպանողական մինիստրութիւնը դրականապէս հակված է երեքպետեան դաշնակցութեանը միանալու կողմը։ Այս օրերս անգլիական պարլամենտի նշանաւոր անդամներից մէկը՝ Լաբուշէր կրկին յարուցեց այդ հարցը, հրատարակելով մի գրութիւն Լօնդօնի «Daily News» լրագրում։

Լաբուշէր ասում է. «Հաստատ աղբիւրից տեղեկացնում են, որ Անգլիայի յարաբերութիւնը դէպի երեքպետեան դաշնակցութիւնը հետևեալ դրութեան մէջ է։ Այն ժամանակ, երբ իշխան Բիսմարկ աշխատում էր միացնել Իտալիան այդ դաշնակցութեան հետ, Կրիսպին տատանվում էր վճռական քայլ անելու, հիմնվելով այն բանի վրա, որ Ֆրանսիայի հետ պատերազմ ծագած միջոցին՝ Ֆրանսիական նաւատորմը կարող է յարձակում գործել Իտալիայի ծովափեայ սահմանների վրա,—իսկ Ֆրանսիական նաւատորմի հետ կռուելու այժ Իտալական նաւատորմը չունի։ Այդ պատճառով իշխան Բիսմարկ խնդրել է Բերլինի անգլիական դեսպանին միջնորդել Լորդ Սալսբրիի մօտ, և համոզել, որ Սալսբրին մի քանի այնպիսի խոստումներ տայ, որոնց վրա հիմնվելով Իտալական կառավարութիւնը հաւատացած լինի, որ պատերազմի դէպքում Անգլիան կաջակցէ Իտալիայի սահմանները պահպանելու գործին։ Լորդ Սալսբրին տուեց Իտալիային համապատասխան խոստումներ։ Թէ ինչպիսի խոստումներ են դրանք, պարզ յայտնի չեն,—բայց նրանք այնքան ձեռնտու են Իտալիայի համար, որ այդ պետութիւնը կարելի համարեց միանալ երեքպետեան դաշնակցութեանը։

Հիմնվելով այդ տեսակ փաստերի վրա, և աչքի առաջ ունենալով այն հակակրութիւնը, որով պահպանողական մինիստրութիւնը վերաբերվում է դէպի Ֆրանսիան, Անգլիայում այն համոզմունքն է տիրում, որ բրիտանական այժմեան կառավարութիւնը կապ ունի երեքպետեան դաշնակցութեան, մանաւանդ Իտալիայի հետ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Հռոմից գրում են, որ պապը սկզբունքով արդէն վճռել է հեռանալ Հռոմից։ Մնում է միայն հոգալ այն միջոցները, որոնցով կարելի է իրագործել այդ մտադրութիւնը։ Հռոմում ենթադրում են, որ պապի հեռանալը երկար չի տևի, և ճիշդ չեն այն լուրերը, որ իբրև թէ պապը ընդ միշտ հեռանալու է Վատիկանից։ Լուր կայ, որ նա կը վերադառնայ Հռոմ՝ Սպանիա, Բէլգիա և մի քանի ուրիշ կաթոլիկ երկիրներ պտտելուց յետոյ։

—Պարիզում օգոստոսի 26-ին ի պատիւ Գլադստոնի ճաշ տրվեցաւ։ Ճաշին ներկայ էին քաղաքական նշանաւոր գործիչները։ Գլադստոն մի ճառով հիացմունք արտայայտեց թէ Պարիզի ցուցահանդիսի և թէ կառավարութեան բռնած դիրքի վերաբերմամբ։

—Լօնդոնից գրում են, որ այնտեղ կասկածում են գեներալ Բուլանժէի Պարիզ վերադառնալու մասին։

—Աւստրիական մամուլը առանձին ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրա, որ բուլգարական կառավարութիւնը պահեստի զօրքն էլ զօրախաղի է հրաւիրում, այդ բանին պատերազմական նշանակութիւն տալով։

—Մի քանի գերմանական լրագիրներ հաղորդում են, որ անհերքելի է այն փաստը, որ Միլան թագաւորը հեռուից էլ ղեկավարում է Սերբիայի քաղաքական գործերը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—Ցօ, ինչ տեսար Պարիզում, հարցնում են Թիֆլիսեցի «հարստացած կինտօին» նրա ընկերները, երբ նա վերադառնում է ցուցահանդիսի այցելութիւնից։

—Պարիժ հասայ թէ չէ, պատմում է նա, առաջ փիքը արի, վուր մէ սրանց վիտաուկէմէն առաջ Գոլովինսկի պրօսպեկտը տեսնեմ։ Հասայ իժում ասի մէ սրանց Հալաքարը, Շաւի Գեղը տեսնեմ։ Նստեցի կօնկա։ գնում եմ, գնում եմ... ինչու տասնուհինգ պրասպեկտ տեսայ.... Վունց Հալաքար, վունց Շաւի Գեղ, դուն մեռնիս, ինչու լաւ չը մթնից չը տեսայ։ Ճամփի վրի գաստինիցումը իրիգնահաց կերայ ու քնեցի։ Սեկկէլ առաւտեան ինչու սաթի տասը էլի կօնկով գնացի հասայ դոլին՝ մագրամ վունց Հալաքար, վունց Շաւի Գեղ տեսայ... Այ Պարիժն էսէնց է։

* * *

Սերբիական նախկին Միլան թագաւորը, այժմեան խնամակալութեան համաձայնութեամբ, պետական գանձարանից պէտք է ստանայ տարեկան 360 հազար ֆրանկ ռոճիկ, այն է օրական 1,000 ֆրանկ։

* * *

Այս օրերս Վիէննայում մի արտասովոր երևոյթ պատահեց.—տարափոխիկ հիւանդութիւնների բուժարանում ոչ մի հիւանդ չը կար։—Այդ փաստը, որքան բացառիկ, նոյնքան և ուրախալի է անկասկած։

* * *

Միւս տարի Դանցիգում պէտք է լինի ձկնորսական կոնֆէրէնցիա՝ ձկների ցուցահանդիսի հետ միասին։

* * *

Ստոկհոլմում կայացած արևելագէտների կոնգրեսին մասնակցում էին 60 շվեդներ, 43 նորվեգացիներ և 407 օտարերկրացիներ, որոնցից 19 ռուսաստանցիներ էին։ Վերջիններից 4-ը հայեր էին։

* * *

Միացեալ - Նահանգներում պրոտեկցիոնիստների կուսակցութիւնը սկսել է պրոպագանդա անել, թէ իբրաքանչիւր մարդ որ կամենում է խմել գարեջուր, գինի և առհասարակ ոգեբուղէն, պէտք է այդ մասին առանձին վկայական ունենայ, յայտնի տուրք վճարելով այդ վկայականի համար։ Դրանով այդ կուսակցութիւնը ուզում է աւելացնել պետական եկամուտը... Դրանից լաւ բան պրոտեկցիոնիստներից սպասելի հարկէ չէ կարելի, և զարմանալի է, որ նրանք չեն առաջարկում ջրի և հացի վրա էլ տուրք նշանակել...

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 սեպտեմբերի։ Բարձրագոյն թոյլատրված է տօնել դուքս Նիկոլայ Մաքսիմիլիանովիչ Լէյխտէնբերգի Կայսերական հանքաբանական ընկերութեան նախագահութեան 25-ամեակը, և հաստատված է այն ոսկեայ մեդալի նկարը, որը տրվում է իբրև պատուաւոր պրեմիա՝ հանքաբանութեան, գեոլոգիայի և պալեոնտոլոգիայի վերաբերեալ ամենալաւ աշխատութեան համար։ Ներքին գործերի մինիստրութեան մէջ հաստատված է մի յանձնաժողով, որը միջոցներ պէտք է ձեռք առնի գաւառներում հրդեհները քչացնելու և ապահովագրութիւնը լաւացնելու համար։

ՀԱՆՕՎԵՐ, 1 սեպտեմբերի։ Այսօր, երեկոյեան 10 ժամին այստեղ հասաւ Թագաժառանգ-Ցէսա-

րեվիչը։ Նրան կայարանում դիմաւորեցին Վիլհելմ կայսրը և Հանովերում գտնվող միւս թագակիր անձինք։ Նորին Բարձրութիւնը պրուսական հուսարների համազգեստով էր, իսկ Վիլհելմ կայսրը ռուսական գնդի համազգեստով։ Կայսրը մի քանի անգամ գրկեց Բարձր Հիւրին։ Ողջունելով միւս պրինցներին և ողջոյն տալով պատուաւոր պահնակին, թագաժառանգը Վիլհելմ կայսրի հետ միասին բաց կառքով ուղևորվեց ամրոց, ուր Նորին Բարձրութեանը սիրալիր կերպով ողջունեցին կայսրուհի Աւգուստա-Վիկտորիա և պրինց Ալբրեխտի ամուսինը։ Դէպի ամրոցը տանող ճանապարհի վրա գտնվող տները շքեղ կերպով զարդարված էին. փողոցի երկու կողմից շարքով զօրք էր կանգնած. ազգաբնակութիւնը ողջունում էր Նորին Բարձրութեան ուղևորված «ուրայով»։

ԿԻԼ, 1 սեպտեմբերի։ Կիլ եղած ժամանակ թագաժառանգ Ցեսարեվիչը այցելեց պրինց Հենրիկոս Պրուսացու ամուսնուն, որի մօտ և ճաշեց։ Ազգաբնակութիւնը դիմաւորեց Նորին Բարձրութեան ամենասիրալիր կերպով։

ՍՕՖԻԱ, 1 սեպտեմբերի։ Երէկ երեկոյեան մի քանի ցանկովիտաներ գնացին քաղաքի մօտ գտնվող Ալէքսանդր II կայսրի արձանի տեղը և արձանի վրա պսակ դրեցին։ Դրանց ետևից այնտեղ գնացին հակառակ կուսակցութեան անձինք և արձանը կոտր-կոտոր արեցին։

ՀԱՆՕՎԵՐ, 2 սեպտեմբերի։ Այսօր առաւօտեան թագաժառանգ-Ցեսարեվիչը գեներալ Գոլցի հետ միասին կառքով գնաց զօրահանդիսի տեղը։ Ժողովուրդը ողջունում էր Նորին Բարձրութեան ուղևորված գոչիւններով։ Թագաժառանգը պատասխանում էր այդ ցոյցերին ողջոյններով։ Զօրախաղի ժամանակ Նորին Բարձրութիւնը, մի հիանալի ձիու վրա նստած, գտնվում էր գերմանական կայսրի կողքին և ուշադրութեամբ հետևում էր զօրքի շարժմանը։ Զօրախաղի վերջանալուց յետոյ թագաժառանգը կայսրի հետ միասին ձիով գնում էր զօրքի առջևից։ Կէսօրից յետոյ ժամը 5-ին կայացաւ հանդիսաւոր ճաշ, իսկ ժամը 7½-ին սկսվեց հանդիսաւոր ներկայացումը։

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 2 սեպտեմբերի։ Վաղը Բարձրագոյն ներկայութեամբ տեղի կունենայ պալատական որսորդութիւն։ Մեծ Իշխան Գեօրգի Ալէքսանդրովիչը այսօր ուղևորվեց Հելսինգեր, «Գեներալ-Ադմիրալ» նաւը վերադառնալու համար։

ՀԱՆՕՎԵՐ, 2 սեպտեմբերի։ Հանդիսաւոր ճաշի ժամանակ, որը տրվեցաւ ի պատիւ թագաժառանգ Ցեսարեվիչի, ներկայ էին գերմանական արքայական զոյգը, միւս թագակիր անձինք և գեներալիտետը։ Սեղանատունը գնալիս Կայսրուհի Աւգուստա-Վիկտորիան գնում էր թեանցուկ թագաժառանգ Ցեսարեվիչի հետ միասին։ Ներկայացման ժամանակ՝ շքեղ կերպով լուսաւորված թատրոնում թագաժառանգը նստած էր Կայսրուհու հետ միասին։

ՎԵՐՆԻ, 3 սեպտեմբերի։ Այսօր այստեղ բացվեց զինուորական-նահանգական դատարանը։

ՕՄՍԿ, 3 հոկտեմբերի։ Այսօր, մաղթանքից յետոյ, պաշտօնական անձանց և մեծ հասարակութեան ներկայութեամբ տեղի ունեցաւ նահանգական-զինուորական դատարանի բացումը։

ՆԷԱՊՕԼ, 3 սեպտեմբերի։ Երէկ երբ Կրիսպի զրօսնում էր կառքով, ճարտարապետութեան ուսանող Կապարալի երկու քար նետեց նրա վրա. Կրիսպիի ծնօտը թեթև կերպով վիրաւորվեց։ Կապարալի ձերբակալվեց։

ԶԱԳՐԷԲ, 3 սեպտեմբերի։ Ռուսաց Կայսրի անուանակոչութեան օրը թատրոնում ածեց ռուսաց ազգային հիմնը, որը ժողովուրդը լսեց ոտի վրա կանգնած և ողջունեց «կեցցէներով»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 սեպտեմբերի։ Տամբովի նահանգապետ բարոն Ֆրէդէրիկս, իր խնդիրքի համաձայն, հիւանդութեան պատճառով արձակված է ծառայութիւնից։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 3 սեպտեմբերի։ Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչը ուղևորվեց Եալտա։

ԼՕՆԴՕՆ, 3 սեպտեմբերի։ Նաւակառույցների բանւորները ընդունեցին կարգինալ Մաննինգի առաջարկութիւնը, որով բանւորների վարձի բարձրացնելը զօրութիւն կը ստանայ նոյեմբերի 4-ից։ Բացի դրանից բանւորների և ապրանք ուղարկողների մէջ էական հարցերի վերաբերմամբ նոյնպէս համաձայնութիւն է կայացրած, այդ պատճառով գործադուլը դադարած կարելի է համարել։ Հաւանական է որ բանւորները կը սկսեն ամենն տեղ բանել երկուշաբթի առաւօտեանից։

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 3 սեպտեմբերի։ Վատ եղանակի պատճառով երէկվայ համար նշանակված պալատական որսը յետաձգվեցաւ։

ՀԱՆՆՕՎԵՐ, 3 սեպտեմբերի։ Երէկվայ զօրախաղը թագաժառանգ Ցեսարեվիչի ներկայութեամբ կայացաւ վերին աստիճանի կանոնաւոր կերպով։ Զօրախաղի հետևանքները քննելիս թագաժառանգ Ցեսարեվիչը գտնվում էր Վիլհելմ կայսրի մօտ, որ և նրան բացատրում էր բոլոր մանրամասնութիւնները։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Սեպտեմբերի 1-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ —	95 ր.	65
Բերլինի վրա 100 մարկ —	46 »	75 »
Փարիզի վրա 100 ֆրանկ —	37 »	80 »
Ոսկի — արժէ —	7 »	62½ »
Մաքսային կուպոններ —	152 »	— »
Արծաթ — — —	1 »	10 »
Բօրսային դիսկոնտներ —	6 և	7%
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջան	98 »	75 »
— — — — 2-րդ —	98 »	75 »
— — — — 3-րդ —	98 »	50 »
— — — — 4-րդ —	98 »	50 »
— — — — 5-րդ —	98 »	50 »
— — — — 6-րդ —	98 »	50 »
Նոր 4%	83 »	— »
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	98 »	62 »
— — 2-րդ —	98 »	62 »
— — 3-րդ —	98 »	75 »
Ներքին 5% առաջին փոխառութ.	263 »	— »
— երկրորդ —	238 »	75 »
5½% բէնտա	102 »	25 »
Ոսկեայ բէնտա	173 »	— »
Եօթերորդ կօնսօլիդ. փոխառ.	140 »	25 »
Նոր երկաթուղային բէնտա	98 »	75 »
5% գրաւակ. թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ.	148 »	50 »
— — թղթադ.	92 »	12 »
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի	98 »	12 »
Գիւղական բանկի	102 »	25 »
6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43տ.	97 »	50 »
— —Ռութայիսի-18 և 43տ.	98 »	— »
Ս. Պետերբուրգի քաղաքային օրլիգացիաներ	95 »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ	94 »	— »
Ոդեսայի — —	93 »	50 »
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	83 »	75

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԶՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ

ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐ ԵՒ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ

Հայոց, ռուսաց լեզուների և դպրոցական ուրիշ առարկաների համար։ Ցանկացողները իրանց պայմաններով որքան կարելի է շուտ պէտք է դիմեն, պ. Մալումեանին, „Մշակի“ խմբագրատանը, ժամը 1—2։ 2—3

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, *որ վարժապետութեան իրաւունք ունի, ցանկանում է ռուսաց լեզուի և այլ առարկաների դասեր ունենալ Հայոց դպրոցներում։ Ցանկացողները կարող են դիմել—Ախալցխա, Յովհաննէս Մալխասեանց։* 2—3

ԳԻՄՆԱԶԻԱՅԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՏԱՆ

ՄԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ

ցանկանում է աշակերտուհիներ պատրաստել։ Հասցէն. Նորաշէնի փողոց, տուն Պարունբէգովի, № 8. 4—10

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Մեր տեղեկութեանը հասաւ, որ **ԷՅՆԷՄ** ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ *արդիւնաբերած այրված կաֆէի նշանագրերը* (ярлыки) *կեղծվում են և որ մայիսի 12-ին ներկայ թվի մեզ աջողվեց գտնել Թիֆլիսում մի հիմնարկութիւն, որը զբաղված է այդ տեսակ* ԿԵՂԾՈՒՄՆԵՐՈՎ, *այնպէս որ դատաստանական իշխանութիւնը կնքեց այրված կաֆէի աւելի քան 2,000 մետալական արկղիկներ, մեր ֆիրմային նմանեցրած այդ տեսակ կեղծ նշանագիրներով և դատաւ դարձեալ 3,000 նոյնանման եարլիկներ։*

Զը նայելով այդ հանգամանքին, այդ կաֆէի առևտուրը դարձեալ շարունակվում է և այդ պատճառով մենք ստիպված ենք նախազգուշացնել յարգելի հասարակութեան, որ ՄԵՐ *եարլիկները տպված են* ՄԻԱԿԵՐՊ ՀԱՒԱՍԱՐ ՏԱՌԵՐՈՎ, *այն ինչ կեղծված եարլիկների վրա հետևեալ խօսքերը.* „ярлыкъ утвержденъ правительствомъ“ *և գործածելու եղանակի բացատրութեան տակ ստորագրութիւնը* „Товорищество паровой фабрики ЭЙНЕМЪ“ *աւելացրած են կաուչուկեան դրոշմով։*

Շոգէգործարանի ընկերութիւնը
ԷՅՆԷՄ Մոսկվայում

1—6 (*Ե. շ.*)

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Գիւղական երկդասեան դպրոցի համար։ Ցանկացողները կարող են պայմանների համար դիմել „Մշակի“ խմբագրատանը։ 1—4

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

որը պէտք է աւանդէ Հայոց լեզուից, թուաբանութիւնից և ձեռագործից շաբաթական 22 դաս ստորին դասատներում։ Ցանկացողները պայմանները իմանալու համար շուտով կարող են դիմել „Մշակի“ խմբագրատանը։ 1—3

Գ. Ե. Ը. **ԵՐԵՔ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ** *կամենում են միասին, բոլոր առարկաներից և առանձին-առանձին զանազան առարկաներից, տեղ ունենալ Հայոց դպրոցներում։*

Հասցէն՝ ЭРИВАНЬ, Папанянцу. 1—3

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Հայկական պատմութիւն մաքուր, կանոնաւոր աշխարհաբար լեզուով, թարգմանեց և լուսաբանեց խորէն Ծ. վ. Ստեփանէ, բազմաթիւ ծանօթութիւններով, նորանոր բաղդատութիւններով, յաւելուածներով, ընդարձակ յառաջաբանով։ Մանաւանդ Հայ աշակերտներին կարդալու և ուսումնասիրելու կարևոր գիրք է։ Գինն է 1 ռուբլի 50 կոպ.։ Դիմելու է թարգմանչին։ Өеодосія, арх. Хорену Степане.

(1 և 15) 3—3

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, *որը երկար տարիներ պաշտօն է վարել կառավարչական ուսումնարանում, ցանկանում է աւագ-ուսուցչի կամ առհասարակ ուսուցչութեան պաշտօն ստանալ Հայոց ուսումնարաններում։ Պայմանների մասին գրաւոր կամ բերանացի կարելի է տեղեկանալ „Մշակի“ խմբագրատանը, ուր և կարելի է իմանալ հասցէն։* 2—5

Մի քանի տարի ուսուցչութեամբ պարապող ՕՐԻՈՐԴԸ, *որը աւարտել է ռուսաց միջնակարգ դպրոցում, ցանկանում է Հայոց դպրոցներում դասատու լինել ռուսաց լեզուից և թուաբանութիւնից առաջին երեք բաժանմունքներում, նաև վարժուհի կար ու ձեի և ձեռագործութեան, շաբաթական 24 դասով և տարեկան 500 ռուբլի ռոճիկով։ Հասցէն՝* Ново-Баязетъ, Кеворку Арцруни. 4—5

Երրորդ կարգի մի ուսուցիչ, որ կարող է աւանդել Հայոց լեզուով աւանդելի առարկաները, ցանկանում է տեղ ունենալ ծխական դպրոցներում։ Ցանկացողները թող դիմեն իրանց վերջնական պայմաններով՝ ԵՐԵՒԱՆ Յարութիւն Թադէոսեանցին։ 3—3

С. А. ЕГІАЗАРОВЪ

ИЗСЛѢДОВАНІЯ ПО ИСТОРІИ УЧРЕЖДЕНІЙ ВЪ ЗАКАВКАЗЬИ

ЧАСТЬ I

СЕЛЬСКАЯ ОБЩИНА

Сословный строй, внутренняя организація и управленіе общины въ связи съ землевладѣніемъ, водовладѣніемъ и податнымъ обложеніемъ.

Цѣна 2 р. 75 к.

Продается въ Казани, въ книжномъ магазинѣ А. А. Дубровина.

8—10 (*Ե*)

Մարմնի մասերը, մանաւանդ ոտների մատները փտելուց պահպանող փոշի

ԳԱԼՄԱՆԻՆ

ծախվում է դեղատներում և դրոգիստների մօտ Եւրոպայի նշանաւոր քաղաքներում և կայսրութեան բոլոր քաղաքներում։ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ *գտնվում է* ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, *հնարողի, դեղատան տիրոջ, ֆարմացիայի մագիստր Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ մօտ, Էլէկտորալնայա փողոց, № 39. Գալմանինի մեծ արկղը արժէ Վարշավայում 50 կ., փոքրը 30 կոպ.*

ՊԷՏՔ Է ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր արկղը կրէր փոշու գործածութեան բացատրութիւնը և ֆարիզի ցուցահանդիսի մեդալները։

Ц. 24869 9—10 (*Ե*)

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Economische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (*Ե*)

Дозволено цензурою, Тифлисъ 4 Сентября 1889 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.